205. ՉՏԵՍ ՃԱՄՓՈՐԴՆԵՐՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Երկու մարդ, որոնք իրենց կյանքում կրիա ու բլբուլ տեսած չկային, միասին մի զամշուտով գնալիս մեկը նկատում է մի ահագին կրիա, բայց չի ճանաչում և ընկերոջը ցույց տալով, հարցնում է.

—Տո՛, էս ի՞նչ է։

Ընկերն իր ընկերոջ մոտ անգետ ձևանալու և իր հեղինակությունը բարձր պահելու համար պատասխանում է.

—Տ՞ո, էս է՞լ չգիտես ինչ է, բլբուլ է, բլբուլ։

—Բլբուլ է՞,—զարմանում է ընկերը։

—Հա՛, բա՞։

—Բա ինչո՞ւ փետուրներ չունի։

—Էնդուր համար, որ կամ նոր է մորից ծնվել, ու փետուրները չեն բուսել և կամ ծերացել է, ու փետուրները թափվել են։